

## ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ պարոն Արթուր Զավադյանի ելույթը Կենտրոնական բանկում 2011 թ. տարեմուտի ավանդական ընդունելության ժամանակ

Մեծարգո նախագահ, հարգելի հյուրեր և գործընկերներ

Շուտով 2011 թվականը կդառնա պատմություն: Այն լի էր և՛ մարտահրավերներով և՛ նվաճումներով:

Ընդհանուր առմամբ տարին հաջող էր ինչպես գների կայունության, այնպես և ֆինանսական համակարգի կայունության և զարգացման տեսանկյունից:

Վերջին տարիների ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպում է մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնողներին պարբերաբար գնահատել և վերահաստատել առաջնահերթությունները, երբեմն փնտրել ոչ ստանդարտ լուծումներ:

Լինելով փոքր և բաց տնտեսություն, Հայաստանը, բնականաբար, անմասն չէ համաշխարհային տնտեսության զարգացումների հետևանքներից: Մի կողմից 2010 թվականին հումքային և պարենային ապրանքների միջազգային գների կտրուկ աճը, մյուս կողմից՝ Հայաստանում գյուղատնտեսության ճյուղի անկումը հանգեցրին նրան, որ 2011 թվական մուտք գործեցինք բարձր գնաճային միջավայրի մարտահրավերով: Հասարակության մոտ ավելանում էին գնաճի սպասումները, գների աճը սկսում էր ընդգրկել սպառողական շուկայի ավելի շատ հատվածներ: Գնաճի արդյունավետ կառավարումը, **մշտապես գտնվելով երկրի ղեկավարի ուշադրության կենտրոնում**, առավել կարևորվեց մակրոտնտեսական քաղաքականության առաջնահերթությունների համատեքստում:

Տարեսկզբին մեր վերլուծությունները վկայում էին, որ մոնետար գործոններով պայմանավորված գնաճը կառավարելի է, և տնտեսության առանց ցնցումների զարգացման պայմաններում դրամավարկային քաղաքականության գործիքներով հնարավոր էր հասնել գնաճի տեմպերի նվազեցմանը ու նպատակային ցուցանիշի ապահովմանը: Սակայն, առաջարկի շուկերի գերակայության պայմաններում միայն դրամավարկային պայմանների խստացումը բավարար չէր խնդրի արդյունավետ լուծման համար, ուստի կարևորվեց նաև մակրոտնտեսական քաղաքականության մեջ ներգրավված բոլոր պատկան մարմինների գործողությունների կոորդինացումը գնաճի կառավարելիության բարձրացման շուրջ: Միաժամանակ, գնաճային սպասումների մեղմման առումով անհրաժեշտ էր հասարակությանը պարբերաբար ներկայացնել այն գործոնները, որոնք բարձր գնաճի ձևավորման պատճառ են դարձել և համատեղ միջոցառումները, որոնք նպաստելու էին գնաճի նպատակի իրագործմանը:

2011 թվականի տարեսկզբից Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային պայմանների խստացումը և Կառավարության կողմից բյուջեի պակասուրդի հետևողական

կրճատմանն ու գյուղատնտեսության ճյուղի առաջարկի ավելացմանն ուղղված քաղաքականությունը բարենպաստ պայմաններ ստեղծեցին գնաճային միջավայրի մեղմման համար: Արդյունքում, ինչպես և ակնկալվում էր, հաջողվեց 12-ամսյա գնաճը երկրորդ կիսամյակից նվազեցնել: Ավելին, երրորդ եռամսյակում մեր կանխատեսումները բավականին լավատեսական էին, ինչը հնարավորություն տվեց նույնիսկ փոքր-ինչ թուլացնել դրամավարկային պայմանները: Գնաճը վերադարձավ տատանումների թույլատրելի միջակայք՝ տարեվերջին կազմելով 4.7%: Այսօր վերլուծությունները ցույց են տալիս, որ շուկերի չափավորության պայմաններում գնաճն առաջիկայում կպահպանվի տատանումների թույլատրելի միջակայքում:

Ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման ոլորտում ուրախ եմ նշել, որ ֆինանսական ինստիտուտների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ մեզ հաջողվել է հասնել մի իրավիճակի, որ անգամ միջազգային շուկաներում բացասական զարգացումների ներքո Հայաստանի ֆինանսական համակարգը կարողանում է կայուն զարգանալ: 2011 թվականին արձանագրվեցին համաշխարհային տնտեսական աճի դանդաղում և մի շարք խոշոր տնտեսություններում պետական պարտքի լրջագույն խնդիրներ, որոնք իրենց հերթին պատճառ հանդիսացան օտարերկրյա որոշ խոշոր բանկերի ֆինանսական վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ Հայաստանյան ֆինանսական համակարգը դեռևս ճգնաժամի խոր փուլում ապացուցեց մարտահրավերներին դիմակայելու իր ունակությունը:

Համակարգի կայուն զարգացման արդյունքում տարեցտարի տնտեսությունում ընդլայնվում է իրական և ֆինանսական հատվածների ինտեգրումը: Այսպես՝ բանկային համակարգի ակտիվների ծավալը արդեն իսկ հատել է 2 տրլն դրամի սահմանագիծը, որը կազմում է տարվա Համախառն Ներքին Արդյունքի մոտ 53%-ը: Այնինչ նախորդ տարի այս ցուցանիշը կազմում էր 45%, իսկ 2008թ. ընդամենը 28%: Ընդ որում, եթե հաշվի առնենք ֆինանսական համակարգի երկրորդ խոշոր մասնակից վարկային կազմակերպություններին, ապա վերոնշյալ ֆինանսական միջնորդության ցուցանիշը տարեվերջին կկազմի 57%: Սա, իհարկե, տարվա կարևորագույն ձեռքբերումներից էր:

Փաստ է, որ ցանկացած համակարգի կայունությունն ու զարգացումը սերտորեն փոխկապված է իր գործունեության անհրաժեշտ կառույցների ու ենթակառուցվածքների կայացման հետ: Եվ այստեղ է, որ առաջ են գալիս համակարգային մոտեցումների և բարեփոխումների արդիականությունն ու անհրաժեշտությունը: Կենտրոնական բանկի ուրույն գործելաոճն է հանդիսանում վճռականության և նախաձեռնողականության ցուցաբերումը ոչ

միայն ֆինանսական համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումներում, այլ նաև մի շարք սոցիալական նշանակության հիմնախնդիրների լուծման գործում:

Սոցիալական նշանակության ծրագրերից է ԱՊՊԱ համակարգը, որի կայացումը սկզբնական փուլում շատերին կասկածելի էր թվում: Չեմ հերքում, որ ԱՊՊԱ-ի ներդրումը բարձր պատասխանատվություն և մեծ ռիսկեր պարունակող գործընթաց է: Սակայն այսօր արդեն կարելի է փաստել, որ այդ գործընթացը իրականացվել է սահուն կերպով, և լուծում է իր առաքելությամբ ստանձնած սոցիալական խնդիրները: Տարվա ընթացքում աշխատանքներ են իրականացվել ԱՊՊԱ համակարգի գործունեությանն անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և կատարելագործման առումով: Կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են տարվում նաև Հայաստանում ապահովագրության այլ տեսակների զարգացման ուղղությամբ:

Սոցիալական նշանակության ծրագրերից է նաև ԵՊՀ շրջանավարտների միության հետ համատեղ մեկնարկված «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին» հիփոթեքային ծրագիրը, որը հնարավորություն տվեց Գիտությունների ակադեմիայի երիտասարդ գիտնականներին ձեռք բերել նորակառույց բնակարաններ մատչելի հիփոթեքային վարկերով: Հիփոթեքային շուկայի խթանմանն ուղղված շարունակական աշխատանքների շրջանակներում այս տարի առաջին անգամ Հայաստանում տեղի ունեցավ հիփոթեքային կորպորատիվ պարտատոմսերի թողարկում «Ազգային հիփոթեքային ընկերության» կողմից Նասդաք-Օ-Էմ-Էքս բորսայի առաջնային տեղաբաշխման հարթակով:

Սոցիալական նշանակության ծրագրերի շրջանակներում տարվա ընթացքում Կառավարության հետ համատեղ իրականացվեց գյուղատնտեսության ոլորտի վարկավորման ծրագիրը, որը շատերին մատչելի պայմաններով վարկեր ստանալու հնարավորություն ընձեռեց:

Կարևորագույն սոցիալական նշանակություն ունեցող կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում Հայաստանում 2011 թվականից ներդրվեց կամավոր, իսկ 2014 թվականից՝ կներդրվի պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը:

Այս տարի մեկնարկեց «Համահայկական բանկ»-ի գործունեությունը, որը կխթանի Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող գերակա ոլորտներում ֆինանսական ներդրումները:

Ընդհանուր առմամբ 2011 թվականը Հայաստանի ֆինանսական համակարգի մասնակիցները կամփոփեն դրական ֆինանսական արդյունքներով: Մասնավորապես ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակից բանկային համակարգը հաշվետու տարում կապահովի ավելի քան 30 մլրդ դրամ շահույթ, ինչպես նաև ակտիվների 32% և վարկային ներդրումների 35% աճեր: Եվ նույնիսկ նման արագատեմպ աճի պայմաններում ֆինանսական

կայունությունը բնութագրող որակական ցուցանիշները ամբողջ տարվա ընթացքում գտնվել են ընդունելի մակարդակում:

Ամփոփելով կուզենայի նշել, որ թվարկված փորձություններն ու ձեռքբերումները միմիայն մեծացնում են մեր պատասխանատվությունը, քանի որ և՛ գլոբալ և՛ ներքին տնտեսության առաջիկա զարգացումները զերծ չեն նորանոր մարտահրավերներից, ինչու չէ՛ նաև հնարավորություններից:

Կենտրոնական բանկը վճռական է, և արդյունավետ աշխատելու բարձր պատրաստակամությամբ է մուտք գործում 2012 թվական:

Մեծարգո պարոն Նախագահ, հարգելի հյուրեր և գործընկերներ: Շնորհավորում եմ բոլորի գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Թող գալիք տարին լինի խաղաղության, կայունության և ձեռքբերումների տարի:

Շնորհակալություն: